**Արձանագրություն N 2-1**
**ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/17 ՀՀ Շիրակի Արթիկ համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման մնացորդային աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան — 16.09.2025թ. ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Նունյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Քանանյան
Ա. Ասատրյան
Հ. Զարգարյան
Ս. Գասպարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

**1.Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին**

---

( Ս. Նունյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել,

բ) գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2025 թվականի սեպտեմբերի 16-ին, ժամը 11:30-ին,

գ) գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնման գին | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Ասֆալտ Քոնսթրաքշն» ՍՊԸ և «Բիդեք» ՍՊԸ կոնսորցիում | 731 899 803 | 606 550 000 | 121 310 000 | 727 860 000 |
| 2 | «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱՐԳՈՍ» ՍՊԸ | | 657 416 666.67 | 131 483 333.33 | 788 900 000 |

Մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

**2. Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ. հասցեն**

---

( Ս. Նունյան)

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցե | Կապի միջոց | Էլեկտրոնային փոստի հասցե |
|---|---|---|---|---|
| 1 | «Ասֆալտ Քոնսթրաքշն» ՍՊԸ և «Բիդեք» ՍՊԸ կոնսորցիում | ՀՀ Երևան Արցախի փ., շ.10դ, բն.42. ՀՀ, ք.Երևան, Նեկրասովի 86. | 374 91 411 100<br>374 11 575 522 | info@asco.am<br>info@bedeck.am |
| | «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱՐԳՈՍ» ՍՊԸ | ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղամաս, 19/3 | 374 93 466 777 | interevros-argos@mail.ru |

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

**3. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին**

---

( Ս. Նունյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ և հրավերի 8.21 կետերը՝ մասնակցի կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց հարցում կատարել՝

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջինիս կողմից վերահսկվող եկամուտների գծով 500 000 ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունենալու մասին,
2. ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն միջին շրջանառությունը գնման գնի 100 տոկոսից պակաս չլինելու մասին,
3. Առողջապահության նախարարություն, Երևանի քաղաքապետարան, ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամ, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջին 3 տարիների ընթացքում 5 000 000 ՀՀ դրամի չափով նախկին պայմանագրային պարտավորությունների ընթացքում պատվիրատուի կողմից սահմանված տույժ և (կամ) տուգանք չունենալու մասին:

3.2 Հայտերի գնահատման նիստը հրավիրել իրավասու մարմինների կողմից եզրակացությունները ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:30-ին, ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Ս. Նունյան

Անդամ՝ ---------------------------------------- Հ. Քանանյան

---------------------------------------- Ա. Ասատրյան

---------------------------------------- Հ. Զարգարյան

---------------------------------------- Ս. Գասպարյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Գ. Հակոբյան